«ԻՆՏԵՐԱԿՏԻՎ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ»
ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ 2023

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ	Ինչքանով է վեց տարեկան երեխան պատրաստ դպրոցին
ԱՌԱՐԿԱ	Դասվար
ՀԵՂԻՆԱԿ	Կուրղինյան Մարգարիտ
ՄԱՐԶ	Երևան
ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ	համար 174 հիմնական դպրոց

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ..... 3
ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱԿՆԱՐԿ 5
ԳԼՈՒԽ 1 8
ԿՐՏՍԵՐ ԴՊՐՈՑԱԿԱՆԻ ԴՊՐՈՑ ԻՆՏԵԳՐՄԱՆ ԴԺՎԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ՀԱՂԹԱՀԱՐՈՒՄԸ 8
1.1 ԿՐՏՍԵՐ ԴՊՐՈՑԱԿԱՆԻ ԴՊՐՈՑ ԻՆՏԵԳՐՄԱՆ ԴԺՎԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 8
1.2 ԻՆՏԵԳՐՄԱՆ ԴԺՎԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱՑԱՀԱՅՏՈՒՄԸ ԾՆՈՂՆԵՐԻ ՄԻՋՈՑՈՎ 9
1. 3. ԴԺՎԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՂԹԱՀԱՐՈՒՄ 13
ԳԼՈՒԽ 2.....16
ՎԵՑ ՏԱՐԵԿԱՆՆԵՐԻ ՀՈԳԵԿԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄՆ ՈՒ ՈՒՍՈՒՑՈՒՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ.....16
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ 20
ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ 22

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ամբողջ աշխարհում վաղ կրթության հիմնախնդիրն այսօր արդիական է :Վաղ կրթության նպատակն է. հոգեբանորեն և գործնականորեն նախապատրաստել երեխաներին դպրոցական ուսուցմանը:Շատ կարևոր է,որ երեխան հաճույքով, մեծ ց անկությամբ մոտոնա կրթությանը:

«Աշակերտը, ով սովորում է առանց ցանկության, թռչուն է առանց թևերի» :

Սաադի

«Ուսուցչի հաջողության գաղտնիքը երեխաների տեսակետը հասկանալու և իրերը նրանց տեսանկյունից դիտելու ունակության մեջ է»:

Ա. Բահաթրյան

Շատ անվանի գրողներ, մանկավարժներ ու հոգեբաններ վկայում են, որ անձի հոգեկան դիմագծի հարցում ինչքան բախտորոշ դեր ունի մանկական տարիների նրա կյանքը: Այն հոգեկան գործունեության ոչ մի կողմին չի վերաբերում այնքան, որքան զգացմունքներին: Ամենապայծառ լույսը, որ ջերմացնում է մանկան հոգին, ծնողների սերն է ու գորովը: Մանկությունը սկսվում է ընտանիքում և ավարտվում է դպրոցում:

Այսօրվա երոխան դպրոց է հաճախում ոչ թե յոթ, այլ վեց տարեկանից : Սրա հետ կապված առաջանում են բազում խնդիրներ : Շատ բան արած կլինի ծնողը իր զավակի հոգեկան հարստության համար, եթե նրա գիտակցությունն ուղղի բարոյապես գեղեցիկին: Որքանո՞վ է երեխան պատրաստ դպրոց հաճախել. կախված է ծնողից և նաև մեծ է նախադպրոցական կրթությունն ապահովող քոլեջների և մանկապարտեզի դերը:

Վեց տարեկան երեխան, ով ավարտում է մանկապարտեզի ավագ խումբն ու պատրաստվում է հաճախել դպրոց, ունի որոշակի պատկերացումներ այս կամ այն հարցի շուրջ, նրա բնավորությունն արդեն ձևավորվել է, նա ունի կարծիք, ինքնուրույնություն և այլն: Մանկաարտեզ-դպրոց անցումը շատ կարևոր է, և դպրոց

մտնող երեխան արդեն պետք է կարողանա կատարել որոշակի գործողություններ, պետք է ունենա գիտելիքների պաշար և այլն:

Վեցամյա երեխան ունակ է ձևավորել և զարգացնել ընդհանուր գծեր: Այդ գծերն են նպատակասլացությունը, կազմակերպվածությունը, կանխամտածվածությունը: Անհրաժեշտ է, որպեսզի երեխաները մինչ դպրոց հաճախելը տիրապետեն իրենց գործունեությունը կազմակերպելու միջոցներին:

Հետազոտության համար ընտրել եմ այս թեման, ավելի խորն ուսումնասիրելու համար այն հարցը, թե արդյոք ինչպիսի՞ն պետք է լինի վեց տարեկան երեխաների պատրաստվածությունը դպրոցին, ինչն էլ կօգնի թե մանկապարտեզի ավագ խմբերում, քոլեջներում, նախակրթարաններում և դպրոցներում աշխատող մասնագետներին աշխատանքները ավելի ճիշտ և ուղղորդված կազմակերպել:

Ինչպիսի՞ն պետք է լինի վեցամյա երեխայի պատրաստվածոըթյունը դպրոցին, և ո՞ր երեխան է համարվում պատրաստ՝ հաճախելու դպրոց : Հարցեր որոնց պատասխանը գտնելը շատ կարևոր է:

Առանձնապես կարևորելով հանրակրթության պետական կրթակարգում ընդգծված պահանջը՝ կարողությունների, հմտությունների և որոշակի արժեքային համակարգի ձևավորման, դպրոցահասակ երեխային ներկայացվող պահանջների և այլնի վերաբերյալ՝ այս հետազոտական աշխատանքում կանդրադառնանք այն հարցին:

Հետազոտության նպատակն է՝

Բացահայտել, թե որ վեցամյա երեխան է պատրաստ դպրոց հաճախել:

Գտնել ուղիները, որոնցով վեցամյա երեխան ճիշտ կուղղորդվի դպրոց:

Հետազոտության խնդիրներն են՝

1. Գիտաուսումնական գրականությունում ուսումնասիրել թեմային վերաբորող նյութեր :

2. Վեցամյա երեխայի դպրոցին պատրաստվածության հարցում բացահայտել ծնողների դերը, ուղղորդել, համագործակցել, ներգրավել պրոցեսին :

3. Առանձնացնել և ուղղորդվել այն գործոններ, որոնք մեծ դեր են կատարում և նպաստում են վեցամյա երեխային պատրաստ լինել դպրոց հաճախել :

Խաչվող հասկացություններ՝ անհատ և հարաբերություններ, պատճառ և հետևանք, օրինաչափություն, զարգացում, կայունություն և փոփոխություն, :

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱԿՆԱՐԿ

Անձի հոգեկան ձևավորման հարցում բախտորոշ դեր ունի մանկական տարիների ապրած կյանքը: Այն, թերևս, հոգեկան գործունեության ոչ մի կողմին չի վերաբերում այնքան, որքան զգացմունքներին: Ծնողնորին սերը, ուշադրությունը, միասին անցկացրած ժամանակը ամենաշատն են ջերմացնում մանկան հոգին : Ծնողը շատ լավ բան արած կլինի, եթե երեխայի գիտակցությունը ուղղի դեպի գեղոցիկը :

Երեխան որքանով է պատրաստ դպրոց հաճախել կախված է ծնողից, նախադպրոցական կրթությունն ապահովող հաստատությունորից, մանկապարտեզից: Վեց տարեկան երեխան ով ավարտում է մանկապարտեզի ավագ խումբը և պատրաստվում դպրոց հաճախել ունի որոշակի պատկերացումներ այս կամ այն հարցերի շուրջ: Ձևավորված է բնավորությունը, երեխան ունի կարծիք, ինքնուրույնություն :

Չափազանց պատասխանատու, բարդ, նպատակային և ժամանակատար գործունեություն է վեցամյա երեխայի դպրոցին պատրաստվածությունը, որը պետք է մշտապես լինի ծնողների ուշադրության կենտրոնում: Այս թեմային անդրադարձել են բազմաթիվ հոգեբան մանկավարժներ: Օրինակ՝ «Երեխաները տարիքն ի վեր» Հռիփսիմե Ղաջոյաննի օժանդակ ձեռնարկում գրում է. գոյություն ունի մարդկային գործունեության երեք տեսակ. խաղ, ուսում, աշխատանք [1]:



Վաղ տարիքում խաղը գործունեության միակ տեսակն է: Խաղը զգացմունքների արտահայտման և շրջապատող իրականության ճանաչման հզոր միջոց է : Երեխան պետք է խաղին տա իր ամբողջ ժամանակը: Ավագ, նախադպրոցական տարիքում մանկան կյանքի մեջ մուտք են գործում և գործունեության երկրորդ տեսակի՝ ուսման տարրեր: Ուսումնական պարապմունքները, թեկուզ կարճատև, իրենց բաժինն են ստանում նրա ժամանակից: Դպրոցական տարիներին արդեն երեխան բաժանում է իր ժամանակը խաղի ու ուսման միջև, ինչ որ ժամանակ հատկացվում է նաև աշխատանքային հմտություններ ձեռք բերելուն: Ահա այստեղ է պարզվում, թե սովորողը որքանով է պատրաստ դրան: Լև Տոլստոյը մեծ ուշադրություն է դարձրել մոր և մանկան շփմանը մայրենի լեզվով, առանձնակի կարևորելով մայրենի լեզվով շփումն ու փոխանցված գիտելիքները [2]: Մայրիկները շատ պետք է խոսեն, ժամանակ հատկացնեն երեխաներին: Կարևոր է, որ այդ տարիքի երեխան մշտապես լսի մի լեզու, ծնողից, պարտեզից: Մուլտֆիլմերը լինեն մայրենի լեզվով,որպեսզի երեխայի մոտ չձևավորվի երկլեզվություն,ինչը բավական բարդ խնդիր է առաջացնում երեխայի խոսքային գործունեության համար: Լև Սոլստոյը գտնում է, որ մեկից հինգ տարեկանում տեղի է ունենում հախուռն հոգեկան զարգացում: Նա գիտակցության հիմքն ու հենարանն է համարում մայրենի լեզուն:

Վեց տարեկաններին պատրաստվածությանն անդրադառնալիս չենք կարող չնշել այն հարուստ փորձը, որն ունի տարիքային և մանկավարժական հոգեբանությունը:

20-րդ դարի սկզբներին տարիքային և մանկավարժական հոգեբանության բնագավառում ի հայտ են գալիս երկու հոսանքներ, որոնցում տարբեր կերպ են մեկնաբանվում երեխաների հոգեկան զարգացման գործոնները: Այդ ուղղությունները միմյանցից տարբերվում էին նրանով, թե որ գործոնն էր դրվում երեխայի զարգացման հիմքում՝ կենսաբանական, թե սոցիալական: Այդ, իհարկե, չի նշանակում, որ մեկ ուղղության ներկայացուցիչները լրիվ կերպով բացառում էին երեխայի վրա սոցիալական գործոնների ազդեցությունը, իսկ մյուսի

ներկայացուցիչները՝ զարգացման կենսաբանական նախադրյալները: Բիոգենետիկական և սոցիոգենետիկական ուղղությունների մասին խոսելիս այդ դասակարգումը բացարձակ համարել չի կարելի: Այն միայն մոտավոր ձևով է բացահայտում երեխայի հոգեկան զարգացման մասին տեսության ստեղծման գործում՝ ցուցաբերելով գերակշիռ միտումը: Այդ երկու ուղղությունները սովետական հոգեբանության մեջ քննադատության ենթարկվեցին 30- ական թվականների սկզբին: Վեց տարեկան առաջին դասարանցին իր հոգեկան զարգացման մակարդակով մնում է դեռ նախադպրոցական: Նրա մոտ պահպանվում է այդ տարիքին բնորոշ մտածողության առանձնահատկությունները, նրա մոտ գերակայում է ոչ կամային հիշողությունը, ուշադրության յուրահատկությունն այնպիսին է,որ երեխան ունակ է արդյունավետ զբաղվել միևնույն գործով 10-15 րոպեից ոչ ավելի:

Անդրադառնալով վեցամյա երեխայի դպրոցի պատրաստվածությանը Լ. Ս. Վիգոտսկին կարևորում է իրականության հետ երեխայի ունեցած հարաբերությունը, որը սկզբից ևեթ սոցիալական հարաբերություն է [3]: Նա ընդգծում է, որ այդ իմաստով նորածնին կարելի է համարել առավելապես հասարակական էակ. նրա ողջ կյանքը այնպես է կազմակերպված, որ ցանկացած իրադրության մեջ իրականում կամ անտեսանելիորեն ներկա է որևիցե այլ մարդ:

Ըստ նրա՝ երեխայի համար մեծահասակը առարկայական աշխարհի հետ շփվելու գործում հանդես է գալիս որպես միջնորդ: Մեծահասակի ներկայությամբ երեխան հաճախ սկսում է եռանդուն կերպով գործողություններ կատարել առարկաների հետ: Բայց երբ մեծահասակը կողքին չէ, առարկայի նկատմամբ երեխայի հետաքրքրությունը կարող է չքանալ: Աստիճանաբար մեծահասակների հետ երեխայի շփման հիմնական ձևը սկսում է դառնալ համատեղ գործունեությունը, որտեղ երեխայի ակտիվությունը դրդում է մեծահասակի գործողություններով, իսկ երեխան մեծահասակին կոչ է անում համատեղ գործողություններ կատարել;

Վերլուծելով կրթության տարբեր աստիճանների սահուն անցման հետ կապված բովանդակային հիմնահարցերը՝ Ս. Խաչատրյանը կրթության ոլորտում համակարգված և համագործակցային աշխատանքի բացակայության պատճառների թվում նշում է կրթության կառավարման օղակներում տարբեր աստիճանների

շարունակականության ապահովման համար պատասխանատու կառույցներ և պաշտոնյաներ չլինելը, կրթության միասնական հայեցակարգային փաստաթղթի բացակայությունը [4]: Բնականաբար, նշված գործոնները մեծապես պայմանավորում են աշակերտի՝ դպրոցական կրթության համակարգ սահուն անցման և հարմարման գործընթացի իրականացման արդյունավետությունը :

ԳԼՈՒԽ 1

ԿՐՏՍԵՐ ԴՊՐՈՑԱԿԱՆԻ ԴՊՐՈՑ ԻՆՏԵԳՐՄԱՆ ԴԺՎԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ՀԱՂԹԱՀԱՐՈՒՄԸ

1.1 ԿՐՏՍԵՐ ԴՊՐՈՑԱԿԱՆԻ ԴՊՐՈՑ ԻՆՏԵԳՐՄԱՆ ԴԺՎԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Վեց տարեկան առաջին դասարանցին իր հոգեկան զարգացման մակարդակով մնում է դեռ նախադպրոցական: Նրա մոտ պահպանվում է այդ տարիքին բնորոշ մտածողության առանձնահատկությունները, նրա մոտ գերակայում է ոչ կամային հիշողությունը, ուշադրության յուրահատկությունն այնպիսին է, որ երեխան ունակ է արդյունավետ զբաղվել միևնույն գործով 10-15 րոպեից ոչ ավելի: Վեց տարեկան երեխայի անձի առանձնահատկությունները լրացուցիչ դժվարություններ են առաջացնում ուսման գործընթացում: Ճանաչողական դրդապատճառները դեռ անկայուն են և իրավիճակային: Ուսուցիչը մեծ ջանքեր պետք է գործադրի ուսման խնդիրներին համապատասխանող ճանաչողական այդ դրդապատճառների պահպանման և զարգացմա համար: Բարձր ինքնագնահատականը հանգեցնում է,որ երեխաները հասկանան մանկավարժական գնահատման չափանիշներ: Ուսումնական գնահատականը համարում են ամբողջ անձի գնահատական: Տագնապայնություն է առաջացնում բացասական գնահատականը, դիդողությունը նաև բերում է աշակերտների պասիվության: Դպրոց ընդունվող երեխայի համար կարևոր է ուսուցչի, տարիքակիցների և իր նկատմամբ վերաբերմունքը:

Դպրոցը սոցիալ–մանկավարժական համակարգ է, որի կրթական միջավայրում աշակերտներն ինտեգրվում են ուսումնական, սոցիալ–մշակութային և հոգեբանական հարմարման արդյունքում: Սովորողների՝ կրթական նոր միջավայրում ակտիվ ինտեգրման գործընթացում ձևավորվում են ուսումնական

գործունեության արդյունավետ իրականացման նոր կարողություններն ու հմտությունները, խմբային և անհատական ուսումնահետազոտական աշխատանքի ձևերի յուրացումը: Ակնհայտ է, որ դպրոցի մանկավարժական կարևորագույն խնդիրն է հատկապես առաջին դասարանցիների հետ աշխատանքը՝ ուղղված նոր համակարգում նրանց արագ և արդյունավետ ինտեգրմանը, սոցիալական հարաբերությունների նոր համակարգում հարմարմանը, սոցիալական նոր դերի յուրացմանը: Դպրոցի խնդիրն է՝ սովորողի համար կենսական այդ բարդ փուլում աջակցել նրան. ուսուցման նոր պայմաններում որքան հնարավոր է արագ ինտեգրվելու աշակերտության շարքերում: Չնայած նպատակային, բովանդակային և գործընթացային բաղադրատարրերում գոյություն ունեցող տարբերություններին՝ կրթական յուրաքանչյուր աստիճանում հարմարման և ինտեգրման գործընթացները բնութագրվում են ընդհանուր և առանձնահատուկ տարբերություններով, որոնք արտացոլում են կրթական տարբեր աստիճանների կապակցվածության, շարունակականության և սահուն անցման հիմնախնդիրը:

Դպրոցական կյանքի առաջին շրջանում են ձևավորվում կրթական դրդապատճառները, որոնք հիմնվում են արժեքային կողմնորոշումների, կենսական իդեալների, պահանջմունքների վրա: Այս տարիքում կենսական ներուժը կենտրոնանում է նոր փոխհարաբերությունների, շփումների, հաղորդակցական ոլորտի ընդլայնմանը, սովորողի սոցիալական դերի յուրացմանը: Սկսվում է ակտիվ կենսադիրքի, աշխարհայացքի ձևավորման շրջանը, աճում են սոցիալ–հոգեբանական և մշակութային պահանջմունքները [5]:

Էականորեն փոխվում է երեխաների հուզական ոլորտը: Նոր միջավայրում կոլեկտիվի ձևավորումն ընթանում է աշակերտի անհատականացման ներքին մղմամբ. առաջնային են դառնում նոր միջավայրում ինքնահաստատման, երբեմն մյուսներից տարբերվելու, հեղինակություն ձեռք բերելու, ինքնատիպ լինելու ցանկությունը, խմբային գործունեության մեջ իր յուրովի դերակատարումն ունենալու միտումը [6]: Կրտսեր դպրոց ընդունելությունը կապված է կյանքի, գործունեության և կենցաղի էական փոփոխությունների հետ: Ե. Գինգելը գրում է [7], որ առաջին դասարանի աշակերտների հարմարումն ընթանում է մի քանի փուլերով՝

- հարմարում ուսուցման նոր համակարգին,
- հարմարում նոր ռեժիմի փոփոխությանը,
- ինտեգրում նոր կոլեկտիվում:

1.2 ԻՆՏԵԳՐՄԱՆ ԴԺՎԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱՑԱՀԱՅՏՈՒՄԸ ԾՆՈՂՆԵՐԻ ՄԻՋՈՑՈՎ

Կրտսեր դպրոցականի դպրոց ինտեգրման սոցիալ-տնտեսական և ընտանեկան հոգեբանական բնույթ ունեցող դժվարությունները բացահայտելու համար իրականացրել ենք սոցիոլոգիական հարցումներ: Երևանի Մալաթիա-Սեբաստիա համայնքի համար **174** հիմնական դպրոցի 1բ դասարան հաճախող 34 առաջին դասարանցիների ծնողներին խնդրել ենք պատասխանել որոշ հարցերի: Մասնավորապես, օնլայն նրանց ուղարկվել է ստորևե ներկայացված հարցերը պարունակող հարցաթերթիկ: Համապատասխան պատասխանները նույնպես բերված են ստորև:

Հարց 1

Արդյո՞ք հեշտությամբ է երեխան արթնանում առավոտյան.

ա. այո, (հարցվածների 57%)

բ. ոչ, (հարցվածների 43%)

Հարց 2

Արդյո՞ք երեխան նախաճաշում է տանը.

ա. այո, (հարցվածների 44%)

բ. ոչ, (հարցվածների 56%)

Հարց 3

Արդյո՞ք երեխան հաճախել է նախադպրոցական հաստատություն:

ա. այո, (հարցվածների 83%)

բ. ոչ, (հարցվածների 17%)

Հարց 4

Արդյո՞ք երեխան կիսվում է դպրոցում ստացած իր տպավորություններով:

ա. այո, մանրամասնորեն (հարցվածների 38%)

բ. այո, բայց մակերեսորեն (հարցվածների 53%)

գ. ոչ (հարցվածների 9%)

Հարց 5

Ի՞նչն է երեխային ամենաշատը գրավում դպրոցում.

ա. այլ երեխաների հետ շփումը, (հարցվածների 30%)

բ. դասապրոցեսը, (հարցվածների 20%)

գ. նոր գիտելիքի ստացումը, (հարցվածների 10%)

դ. այլ – մանրամասնել (հարցվածների 40%)

այլ պատասխանի մեջ հիմնականում նշված էին «դասամիջոցները», «ֆիզիկական վարժությունները» պատասխանները:

.....

Հարց 6

Ինչի՞ց է երեխան ամենաշատը նեղվում դպրոցում.

ա. երկար ժամանակ նստած մնալուց, (հարցվածների 50%)

բ. դասապրոցեսից, (հարցվածների 25%)

գ. նոր մարդկանցից ու միջավայրից, (հարցվածների 20%)

դ. այլ – մանրամասնել (հարցվածների 5%)

.....

Հիմնվելով հետազոտական աշխատանքի շրջանակներում անցակցված սոցիոլոգիական հարցումներ վրա՝ եզրահանգել ենք, որ դպրոցի կրթադաստիարակչական միջավայր ինտեգրման գործընթացում առկա են հետևյալ դժվարությունները՝

- կյանքի սովորական ռիթմի փոփոխությունը,
- հուզական ապրումները՝ կապված նախադպրոցական, խաղային կոլեկտիվից հեռանալու հետ,

- նոր պայմաններում խաղի, հանգստի և ուսուցման օպտիմալ ռեժիմի պահպանման կարողությունների ոչ բավականաչափ ձևավորվածությունը,
- ինքնակառավարման ցածր մակարդակը,
- ուսումնական գործունեությամբ ծանրաբեռնվածությունը, որը շատ հաճախ նյարդահոգեկան լարվածություն է առաջացնում,
- տեղեկատվական հոսքի մեջ կողմնորոշվելու հետ կապված դժվարությունը,
- համադասարանցիների և ուսուցիչների ներկայությամբ հրապարակավ ելույթ ունենալու վախը, կաշկանդվածությունը, հաղորդակցման հմտություններին պակասը, համադասարանցիների և ուսուցիչների հետ հաղորդակցման, հարաբերություններ ձևավորելու անվճռականությունը,
- նոր միջավայրում հոգեբանական անհարմարավետությունը, հաճախումների ամենօրյա վերահսկողության գործընթացից դժգոհությունը և այլն:

Բնականաբար, նշված դժվարություններն ի հայտ են բերում ֆիզիոլոգիական, կենսաբանական, սոցիալ–մշակութային և հոգեբանական բազմաթիվ գործոններ, որոնք էական փոփոխություններ են առաջացնում երեխաների վարքի և գործունեության՝ տարիների ընթացքում ձևավորված կարծրատիպերի մեջ: Քանի որ միջավայրի և գործունեության ձևերի փոփոխությունը բարդ գործընթաց է, ապա նրանում առանձնացվում են այդ միջավայրում ինտեգրման և հարմարման՝ միմյանց հաջորդող մի քանի փուլեր և շրջաններ:

Ի. Ն. Սիմաևան առանձնացնում է կրթական գործընթացում սովորողների հարմարման հետևյալ փուլերը՝ ֆիզիոլոգիական (մոտ երկու շաբաթ), հոգեբանական (մոտ երկու ամիս), սոցիալ–հոգեբանական (մինչև երեք տարի) [8]: Օ. Վ. Գլինկինան առաջադրում է սովորողների հարմարման երեք փուլ՝ նախնական, ընդհանուր և առարկայական–մասնագիտական [9]:

- Ա. Յու. Պետրովն առանձնացնում է սոցիալ–մշակութային նոր միջավայրում առաջին դասարանցու հարմարման հետևյալ փուլերը՝ նախնական փուլ. անհատը կամ խումբը գիտակցում է, որ պետք է համապատասխան

վարքագիծ դրսևորի նոր միջավայրում, սակայն դեռևս պատրաստ չէ այդ միջավայրում ընդունված նորմերն ու արժեքներն ընդունելու,

- ❖ խմբի անդամները դրսևորում են փոխըմբռնում և փոխադարձ հանդուրժողականություն միմյանց վարքի նկատմամբ,
- ❖ ակկոմոդացիա, այսինքն՝ անհատն ընդունում է նոր միջավայրում ընդունված որոշ արժեքներ և նորմեր, դրսևորում նոր խնդիրներին, պահանջներին համապատասխան վարք,
- ❖ ասիմիլյացիա, այսինքն՝ խմբի, անհատի և միջավայրի արժեքների լիակատար համընկնում [10]:

1. 3. ԴԺՎԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՂԹԱՀԱՐՈՒՄ

Հոգեբանական տեսանկյունից կրթական միջավայրում հարմարման գործընթացն իրականանում է չորս փուլով: Առաջին՝ նախապատրաստական փուլը կապված է առաջին դասարանցու ինքնորոշման և հոգեբանական պատրաստության ձևավորվածության հետ՝ հաղթահարելու համար դպրոցում հարմարման առաջին շրջանում առկա դժվարությունները: Երկրորդ՝ կողմնորոշիչ փուլը կապված է տվյալ դպրոցի առանձնահատկությունների, դպրոցի ավանդույթների, ներքին կանոնների, նորմերի, պահանջների յուրացման հետ: Երրորդ՝ գնահատողական փուլում սովորողներն իմաստավորում են իրենց կրթական համոզմունքները [11]:

Վ. Պ. Կոնդրատովան դիտարկում է կրտսեր դպրոցում աշակերտների հարմարման հետևյալ երեք փուլերը՝

- ➢ առաջին փուլում իրականանում է դպրոցի կրթական միջավայրի նոր պայմաններին օրգանիզմի պատասխան հոգեկան հակազդում, որը տարբեր անհատների համար տարբեր տևողություն ունի, սակայն հիմնականում ավարտվում է առաջին կիսամյակի ընթացքում,
- ➢ երկրորդ փուլը ներառում է հարմարողական մեխանիզմների և հոգեկան գործընթացների վերակառուցումն ըստ միջավայրի պահանջների և ավարտվում է երկրորդ կիսամյակում,

- երրորդ փուլը կայուն հարմարման փուլն է, երբ ավարտվում են հարմարողական հակազդումները. սովորաբար այդ փուլն ավարտվում է առաջին:

Մեր կարծիքով դպրոցի կրթական միջավայր ինտեգրման կարևոր պայմաններ են սովորողի հաղորդակցման մակարդակը, ուսուցչի աջակցությունը: Կարևոր են նաև սովորողի անձնային առանձնահատկությունները, հուզական ներաշխարհը, բնավորությունը, խառնվածքը, բարոյակամային որակները, հետաքրքրությունները, պատկերացումները, աշխարհընկալումը, հակումները, ինքնակառավարման կարողությունը:

Կրտսեր դպրոցում սովորողների ինտեգրման դժվարությունների բացահայտման համար իրականացրել ենք սոցիոլոգիական հարցումներ դասվարների շրջանում: Հարցերի և պատասխանների միջոցով տվյալ ժամանակահատվածում բացահայտվել են հետևյալ արդյունքները.

Հարց 1. Ի՞նչ դժվարությունների են հանդիպում առաջին դասարանցիները դպրոց ոտք դնելուն պես:

ա. ուսումնական,

բ. սոցիալական,

գ. հոգեբանական,

դ. այլ

Հարցման արդյունքները վկայում են, որ կրտսեր դպրոցականների շրջանում հարմարման գործընթացում առավել գերակշռում են հոգեբանական դժվարությունները՝ 39,4 %, ինչը խոսում է հոգեբանական ծառայությունների անհրաժեշտության մասին: Հոգեբանական դժվարություններից նշում էին դրական փոխհարաբերությունների ձևավորելը, երեխաներն ունենում են հուզական ապրումներ՝ կապված մանկապարտեզից, խաղերից հեռանալու հետ: Հարցված մանկավարժների 25,2 %–ը նշեց, որ դժվարությունները հիմնականում ուսումնական են, քանի որ երեխաները մանկապարտեզից, խաղային վիճակներից միանգամից տեղափոխվում են ուսումնական հստակ մշակված ու սահմանված միջավայր, որտեղ առաջնայինը ուսուցումն է: Նրանք մատնանշում էին ուսումնական տեղեկատվությունը յուրացնելու և համակարգելու դժվարությունները: Հարցված

դասվարների 29,8 %–ն էլ նշում է, որ առաջին դասարանում երեխաները հիմնականում հանդիպում են ինտեգրման սոցիալական դժվարությունների, նոր կոլեկտիվում հարմարմանը, ժամային գրաֆիկին, նոր միջավայրում ընդունված նորմերին և կանոններին:

Հարց 2. Կրտսեր դպրոցականները առաջինը ումի՞ց են ակնկալում աջակցություն:

ա. դասվարից,

բ. ծնողներից,

գ. սոցիալական մանկավարժից,

դ. ընկերներից,

ե. հոգեբանից

Հարցման մասնակից դասվարների կարծիքով երեխաների 32,2 %–ը աջակցություն առաջինը սպասում է դասվարից: Սա բացատրվում է նրանով, որ դասվարն օրվա մեծ հատվածը երեխաների հետ է և աջակցում է նրանց՝ նոր միջավայր արդյունավետ ինտեգրմանը: Հարցվածների 41,1 %–ը գտնում է, որ երեխաները աջակցությունը հիմնականում սպասում են ծնողներից, և սա բնական երևույթ է այդ տարիքում, քանի որ նրանք դեռևս շատ են կախված ծնողներից, և իրենց պաշտպանը, իդեալը ծնողն է: Հարցվածների 11,2 %–ը գտնում է, որ երեխաների ինտեգրման դժվարությունները սոցիալական մանկավարժի խնդիրն է: 12,3 %–ը դժվարությունների հաղթահարման աջակցությունը փնտրում է հոգեբանական ուղղորդված գործունեության մեջ:

Այսպիսով՝ ուսումնառության առաջին շրջանում դպրոցի կրթական միջավայր սովորողների ինտեգրումը սոցիալ–մշակութային նոր միջավայրում նոր հարաբերությունների ձևավորման գործընթաց է, որում առանձնանում են ուսումնական, հոգեբանական, սոցիալ–մշակութային և մասնագիտական ուղղությունները: Դպրոց ինտեգրման գործընթացի արդյունավետությունը մեծ չափով կախված է ուսուցչի անձնային և մասնագիտական որակներից, մանկավարժական տակտից և սոցիալ–մշակութային կոմպետենցիաների ձևավորվածությունից, հաղորդակցման ճկուն, ըստ իրավիճակի ոճերի տիրապետման հմտություններից:

Հետազոտական աշխատանքի առաջին փուլով բացահայտվել են դպրոցի կրթադաստիարակչական միջավայր ինտեգրման գործընթացում առկա դժվարությունները, ինչի համար ծնողների և դասվարների շրջանում իրականացվել են սոցիոլոգիական հարցումներ:

ԳԼՈՒԽ 2

ՎԵՑ ՏԱՐԵԿԱՆՆԵՐԻ ՀՈԳԵԿԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄՆ ՈՒ ՈՒՍՈՒՑՈՒՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

Մարդու և կենդանիների հոգեկանը գտնվում է մշտական զարգացման վիճակում: Սակայն կենդանական աշխարհում և մարդու մոտ զարգացման պրոցեսների բնույթն ու բովանդակությունը որակապես տարբեր են: Ըստ հոգեբանների մարդու հոգեկան ֆունկցիաների առանձնահատկությունն այն է, որ դրանք զարգանում են երեխայի կողմից հասարակակական- պատմական փորձին տիրապետելու ընթացքում [11]:

Երեխան ծնվում է ու ապրում մարդկային աշխարհում, մարդկային առարկաների ու մարդկային հարաբերությունների ոլորտում: Դրանցում ամրապնդված է հասարակական պրակտիկան, փորձը: Երեխայի զարգացումը հենց այդ փորձը յուրացնելու պրոցեսն է: Այդ պրոցեսն իրագործվում է մեծերի կողմից մշտական ղեկավարման պայմաններում, այսինքն՝ ուսուցման ընթացքում:

Երեխան յուրացնում է մարդկության պատմության ընթացքում կուտակված փորձը: Երեխայի մտածողությունը, հիշողությունը, ընկալունակությունը հիմնականում պայմանավորված են գործունեության որոշակի եղանակների, խոսքին և գիտելիքներին տիրապետելով:

Մեծ թվով հետազոտություններում (Պ. Յա. Գալպերին, Դ. Բ. Էլկոնին, Վ.Վ. Դավիդով, Լ. Ա. Վենգեր) ստացվել են տվյալներ, որոնք ցույց են տալիս, որ ուսուցման բովանդակության մեջ հատուկ միջոցներ (զգայությունների զարգացման դեպքում՝ ձևի ու գույնի էտալոններ, մաթեմատիկա սովորեցնելիս՝ չափեր,տարբեր մոդելներ ու սխեմաներ) ներմուծելը հանգեցնում է մտավոր զարգացման այն փուլերի սկզբունքային փոփոխությունների, որոնք անփոփոխ ու բացարձակ էին համարվում: Այսինքն, վստահորեն կարող ենք ասել, որ ուսուցման

բովանդակությունը՝ երեխային տրվող գիտելիքները և գործունեության եղանակները փոփոխելով կարելի է էական փոփոխություններ առաջացնել նաև նրա զարգացման պրոցեսում: Ուսուցան բովանդակությամբ են որոշվում երեխայի մտավոր զարգացման ընդհանուր տիպը և կառուցվածքը:

Հինգից յոթ տարեկան երեխաներին բնորոշ է այն, որ նրանց գործողությունները մեծ չափով որոշվում են նյութով, այն առարկայական իրադրությամբ, որտեղ նրանք գործում են: Օրինակ, երբ նրանք խորանարդիկներից տուն են կառուցում, ապա նրանց գործողությունները կախված են իրենց առաջ դրված խորանարդիկների ձևից կամ գույնից, ավելի հազվադեպ՝ կառուցման նախօրոք մտածված պլանից: Նախադպրոցական տարիքի վերջում գործունեության մեջ ավելի ու ավելի մեծ տեղ է սկսում գրավել ապագա արդյունքի մտապատկերը: Սակայն այդ նվաճումը բոլոր երեխաների մոտ չի նկատվում Նպատակասլացության, կազմակերպվածության, գործունեության կամածին բնույթի զարգացման ցածր աստիճանը բնուորոծ են դպրոց ընդունվող շատ երեխաների համար, և այդ հանգամանքը մեծ չափով դժվարացնում է նրանց ուսուցումը:

Կրտսեր դպրոցական հասակի վերջում սովորողների մեծամասնության մոտ գործունեության նպատակի ու դրդապատճառի միջև կանխամտածված ձևով կապեր հաստատելու ունակություն է զարգանում:Գործողության կատարման ընդհանուր իմաստի փոփոխման դեպքում երեխաները կարողանում են փոխել կոնկետ նպատակը և վերակառուցել իրենց գործողությունները:

Երեխայի կյանքի առաջին վեց տարիների ընթացքում ուսումնադաստիարակչական պրոցեսում պետք է հաշվի առնել, որ շրջապատողների հետ երեխայի փոխհարաբերությունների եղանակների ու գիտելիքների և, մյուս կողմից, հոգեկան գործունեության եղանակների զարգացման մակարդակի միջև եղած հարաբերությունը զարգանում է երկու կողմից: Այսպես, երեխայի գործունեության հնարավորությունների ընդլայնումը և նրա դրդապատճառների փոփոխությունները հանգեցնում են շրջապատող մարդկանց հետ նրա ունեցած փոխհարաբերությունների ողջ համակարգի փոփոխման անհրաժեշտությանը:

Հոգեբաններն այն կարծիքին են, որ երեխայի անձը որոշակիորեն սկսում է ձևավորվել արդեն նախադպրոցական տարիքում: Երեխայի անձի զանգացումն իր մեջ ներառում է նրա հուզական- կամային ոլորտի, ինչպես նաև հետաքրքրությունների և վարքի դրդապատճառների ձևավորումը: Իսկ սա, իր հերթին, որոշվում է սոցիալական միջավայրում և, առաջին հերթին, երեխայի զարգացման տվյալ աստիճանի համար տիպական այն հարաբերություններով, որոնք հաստատվում են նրա ու չափահասների միջև:

Վաղ մանկության տարիներին երեխան չի հասկանում չափահասի ու նրա ազդեցության նշանակությունը, չի հասկանում նաև ինքն իրեն: Կոնկրետ իրադրության մեջ երեխան համատեղ կոնկրետ գործունեություն է կատարում չափահասի հետ: Վերջինս այդ իրադրության կենտրոնական օղակն է, իսկ երեխան կատարում կամ չի կատարում այն, ինչ նրանից պահանջում է չափահասը: Այստեղ դեռևս չի առաջանում հնազանդության, «անել թե չանել» հարցի մասին խորհրդածելու խնդիր կամ դրդապատճառների պայքար: Երեխայի վարքն իմպուլսային է:

Արդեն նախադպրոցական տարիքի սկզբում երեխայի և չափահասի միջև ծագում են սկզբունքորեն նոր փոխհարաբերություններ: Երեխան սկսում է իրեն առանձնացնել մեծահասակներից: «Ես ուզում եմ» արտահայտության հաճախակի օգտագործումը ցույց է տալիս, որ երեխան սկսում է իրեն առանձնացնել մեծահասակներից:

Ակտիվ խոսքի զարգացումը կյանքի առաջին վեց տարիների ընթացքում նպաստում է երեխայի հետագա զարգացմանը; Ուստի կարևոր է ծնողի, հաճախած խմբակների, նախադպրոցական կրթության, անձի սոցիալականացման դերն այս հարցում:

Զարգացման գործում ձեռք բերած հաջողությունները որակապես փոխում են փոքրիկի ողջ վարքը: Թեև մեծահասակի դերը մնում է առաջատար, սակայն իր գործնական կյանքի նեղ ոլորտում և իր սահմանափակ հնարավորությունների շրջանակներում երեխան ձգտում է գործել առանց մեծերի օգնության: Նոր միտումները մեծացնում են երեխայի ակտիվությունը և նրա ու մեծահասակների միջև նոր փոխհարաբերություններ են առաջացնում: Կյանքի մի շրջան կա, որն

ընդունված է համարել ճգնաժամային (երրորդ տարվա ճգնաժամ), քանի որ մեծահասակի համար դժվար է դառնում իր նեգատիվիզմի ու կամակորության շնորհիվ անտանելի դարձած երեխայի հետ շփվելը: Ճգնաժամից դուրս են գալիս ճիշտ պլանավորված աշխատանքի արդյունքում: Շատ կարևոր է ճիշտ ժամանակին ձեռնարկել որոշ քայլեր, հետագայում բարդույթներից խուսափելու համար:

Նախադպրոցական տարիքում (3-ից մինչև 7 տարեկան) շարունակվում է երեխայի օրգանիզմի արագ հասունացումը: Ընդհանուր աճի հետ զուգընթաց տեղի է ունենում հյուսվածքների և օրգանների անատոմիական ձևավորումն ու ֆոնկցիոնալ զարգացումը: Կարևոր նշանակություն ունեն կմախքի ոսկրացումը, մկանների զանգվածի մածեցումը, շնչառության ու արյան շրջանառության օրգանների զարգացումը: Ուղեղի կշիռը ավելանում է 1110-ից մինչև 1350 գրամ: Ուժեղանում է մեծ կիսագնդերի կեղևի կարգավորող դերը, ենթակեղևային կենտրոնների նկատմամբ նրա վերահսկողությունը: Աճում է պայմանական ռեֆլեքսների առաջացման արագությունը, հատկապես ինտենսիվորեն է զարգանում երկրորդ ազդանշանային համակարգը [12]:

Ֆիզիկական զարգացումն անհրաժեշտ պայմաններ է ստեղծում ավելի մեծ ծավալի ինքնուրույն աշխատանքի և ուսուցման ու դաստիարակության պրոցեսում հասարակական փորձի նոր ձևերի յուրացման համար:

Նախադպրոցական տարիքը բնութագրում է երեխայի զարգացման սոցիալական նոր իրադրության առաջացմամբ: Շրջապատող մարդկանց մեջ նախադպրոցականի գրաված տեղը էականորեն տարբերվում է այն տեղից, որը բնորոշ է վաղ մանկական տարիքի երեխայի համար: Երեխան տարրական պարտականություններ է ձեռք բերում: Նոր ձևեր է ստանում մեծերի հետ երեխայի ունեցած կապը: Համատեղ գործունեությունը հերթափոխվում է մեծահասակների ցուցումների ինքնուրույն կատարմամբ: Առաջին անգամ հնարավոր է դառնում քիչ թե շատ հետևողականորեն և ըստ որոշակի ծրագրի երեխային գիտելիքներ սովորեցնելը: Սակայն, ինչպես ցույց է տվել Լ. Ս. Վիգոտսկին, այդ ծրագիրը կարող է իրագործվել միայն այն չափով, ինչ չափով այն երեխայի համար սեփական ծրագիր է դառնում:

Նախադպրոցականի զարգացման սոցիալական իրադրության առանձնահատկությունները դրսևորվում են գործունեության նրա համար բնորոշ տեսակներում, առաջին հերթին՝ դերային խաղում: Մեծահասակների կյանքին հաղորդակից դառնալու ձգտումը, զուգորդվելով անհրաժեշտ գիտելիքների ու կարողությունների բացակայության հետ, հանգեցնում է այն բանին, որ երեխան այդ կյանքի մասին տեղեկությունները յուրացնում է իր համար մատչելի խաղի միջոցով: Նախադպրոցական հասակի երեխաների զարգացման համար հատկապես նպաստավոր պայմաններ են ստեղծվում նախադպրոցական հասարակական դաստիարակության համակարգում: Մանկական նախադպրոցական հիմնարկներում երեխաներին որոշակի ծրագրով գիտելիքներ են տրվում, ձևավորվում են նրանց համատեղ գործունեության նախնական ձևերը, առաջանում է հասարակական կարծիք:

Ինչպես ցույց է տալիս հետազոտության արդյունքերը, մանկապարտեզներում դաստիարակված երեխաների հոգեկան զարգացման ընդհանուր մակարդակն ու դպրոցում սովորելու համար պատրաստակամության աստիճանը միջին հաշվով ավելի բարձր են համեմատած այն երեխաների հետ, որոնք մանկապարտեզ չեն հաճախում:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Այսպիսով, դասվարների և ծնողների միջոցով անցկացված սոցիոլոգիական հարցումների արդյունքների հիման վրա հետազոտական աշխատանքի շրջանակներում բացահայտել ենք, թե որ վեցամյա երեխաներն են ավելի պատրաստ դպրոց հաճախելուն: Նշել ենք ուղիներ, որոնցով վեցամյա երեխան ճիշտ է ուղղորդվում դեպի դպրոց:

Հետազոտության ընթացքում կարևոր դեր են խաղացել հետևյալ փաստերն ու եզրահանգումները.

- Խաղը լավագույն միջոցն է պարզելու, թե երեխան որքանո՞վ է պատրաստ հաճախել դպրոց:

- Բոլոր վեցամյա երեխաներին կարելի է կարճ ժամանակահատվածում պատրաստել հաճախել դպրոց համագործակցելով կոլեգաների, երեխաների ծնողների և օրինական ներկայացուցիչների հետ:
- Երեխային նախապատրաստել ուսումնական գործունեությանը նշանակում է տարբեր ճանապարհներով և ամենաբազմազան միջոցներով օժանդակել, որ ավագ նախադպրոցականը ձեռք բերի մտածողական գործողություններ կատարելու որոշակի ունակություններ:
- Դպրոց ընդունվող ոչ բոլոր երեխաներն են տիրապետում ուսումնական գործունեություն ծավալելու համար չափազանց կարևոր այն ունակություններին, որոնք, բնականաբար, պիտի ձևավորվեն ու զարգանան դպրոցում դասավանդվող բոլոր առարկաների դասերի ընթացքում՝ ստեղծելով անձի բազմակողմանի զարգացման հնարավորություններ:
- Վեցամյա երեխաների հետ աշխատելիս անհրաժեշտ է կարևորել ուսումնական գործունեություն ծավալելու համար անհրաժեշտ կարողությունների ձևավորումը:
- Ուսուցան բովանդակությամբ են որոշվում երեխայի մտավոր զարգացման ընդհանուր տիպը և կառուցվածքը:

Իմ կարծիքով դպրոցի կրթական միջավայր ինտեգրման կարևոր պայմաններ են սովորողի հաղորդակցման մակարդակը, ուսուցչի աջակցությունը, երեխա, ուսուցիչ, ծնող փոխկապակցվածությունը: Երեխան պետք է զգա, որ ինքը կարևոր օղակն է այդ պրոցեսի: Կարևոր են նաև սովորողի անձնային առանձնահատկությունները, հուզական ներաշխարհը, բնավորությունը, խառնվածքը, բարոյակամային որակները, հետաքրքրությունները, պատկերացումները, աշխարհընկալումը, հակումները, ինքնակառավարման կարողությունը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Ղաջայան Հ., «Երեխաները տարիքն ի վեր», Երևան, 2002, էջ 36
2. Глинкина О. В., «Адаптация первокурсника» // Профессиональное образование, 2002, N9, С. 12–16.
3. Симаева И. Н., Динамика эмоционально – чувственного состояния личности в процессе адаптации к деятельности», Калининград, Изд–во КГУ, 2002, с. 129
4. Խաչատրյան Ս., «Կրթության փիլիսոփայություն (ձեռնարկ ուսանողների համար)», Եր., Լինգվա, 2009, էջ 35.
5. Թորգոմյան Լ. Վ., «Մանկավարժության ընդհանուր հիմունքներ», Եր., Տոներ, 2005, էջ 72.
6. Выготский Л. С., «Психология искусства», М., 1986, стр. 205.
7. Гингель Е., «Диалог как фактор адаптации первокурсников» // Высшее образование в России, 2007, N 9, С. 158–160
8. https://hy.wikipedia.org/
9. Азаров Ю., «Студент: возможности личного роста» //Высшее образование в России, 2002, N1, с. 50–57. 4
10. https://peskiadmin.ru/hy/komponenty-lichnostnoi-gotovnosti-detei-shkole-sostavnye-komponenty.html
11. «Տարիքային և մանկավարժական հոգեբանություն», պրոֆ. Ս. Վ. Պետրովսկու խմբագրությամբ, Եր., 1977, էջ 25.
12. Дураченко О. А., Масич Е. В.-“Шпаргалки экзамену по психологии” Новосибирск, 2000 г., с. 141.